Դենպետն մեծ Տիրրի Զատէ, Նախարարք և այլք. բայց յայնժամ ոչ լուծաւ խնդիրն և ոչ բարձաւ խռովութիւնն երկուց ազգաց։ Եւ յերկրորդում նուագի կազմեցաւ ժողով մեծ 'ի Դենպետութեան Օմար Խալիֆի Էֆենտեայ, յորում էին մեծամեծք Տէրութեանն, դասք գիտնականաց, և Երեսփոխանք Հայոց և Ցունաց, յառաջ բերեալ զհրովարտակն Սէլիմայ Արքայի. որպէս Ցոյնք զդաշնագիրն Օմարայ։ Արդ՝ երկոքին հրովարտակքն Սէլիմայ, տուեալ Հայոց և Ցունաց, հիմն ընտրեցան, յորս բացայայտ գրեալ են երկուց ազգաց ըստ օրինաց իւրեանց՝ ընկերութեամբ կատարել զուխտս 'ի տաճարին Ս. Ցարութեան, պայմանաւ առաջնութեան Պատրիարքին Ցունաց. և արտաքոյ նորին եղեալ տեղեաց, որոց անուանքն եւս բացորոշ գրեալ են 'ի նոյն հրովարտակսն, առանց կռուոյ անկախութեամբ տիրել. երկաքանչիւր ազգք 'ի ժողովին ընկալան զհրովարտակս միմեանց։ Մին 'ի խնդրոց խառթեան էր սեփհական տեղիքն 'ի Ս. Ցարութիւն, որք գարձեալ յականէ յանուանէ բացայայտ գրեալ են 'ի հրովարտակս երկաքանչիւրոց, որք եւ հաճեցան անկախութեամբ տիրել սեփհական բնակութեանց իւրեանց, որպէս տիրեալ են 'ի ժամանակս Սէլիմայ և անդր։ Եւ երկրորդ խնդիրն էր Հապէշք, Ղպթիք և Ասորիք, որք 'ի սկզբանէ անտի սահմանեալ են լինիլ համազգային և հետեւող ազգին Հայոց, և Ցոյնք ընդդէմ Կայսերական հրամանի հակառակեալ՝ թէ մեղ են հետեւողք։ Սոքա բացակայ գոլով 'ի ժողովոյն՝ ծանուցաւ երկուց ազգաց, գրել առ Դատաւորն Երուսաղէմի քննել անդ և ստուգել, զի որպէս էին նոքա յառաջագոյն, այնպէս եղիցին և առ յապայն։ Եւ վերջինն 'ի խնդրոց՝ բաժանորդ և սեփհական տեղիքն 'ի Ս. Ցարութիւն, որ նախ քան զայս հրդեհեալ էր, զբաժանորդ տեղիսն՝ ընկերութեամբ, և զսեփհական տեղիս անկախութեամբ չինել և նորոգել։ Սակայն չունի ոք իրաւունս միջամուխ լինիլ 'ի խնդիրս չինութեան, զի այն պատկանի միայն Կայսերական մեծութեանս. զի ըստ նեբելոյ Շէրիֆի օրինաց համաձայն առաջին ձեւոյն, առ որ կամիմ 'ի հպատակաց Տէրութեանս՝ նմա յանձն առնեմ զայն. վասն այսր չունի ոք իրաւունս ամբաստան լինելոյ.